Արձանագրություն N «*ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05*»-03

«*ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05*» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

16 սեպտեմբերի 2020թ, ժամը 11:00, Նոր Գեղի համայնք, Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղիի համայնքապետարան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ՝ Ա.Հլղաթյան
անդամներ՝ Ա. Մկրտչյան, Լ.Բարսեղյան
քարտուղար՝ Կ. Հայրապետյանը

Օրակարգ

<<ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 >> ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Հանձնաժողովի նախագահ՝ Ա. *Հլղաթյան*)

<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և ՀՀ ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

1.<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և ՀՀ ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման մասին

(Հանձնաժողովի նախագահ՝ Ա. *Հլղաթյան*)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 28.07.2020թ.-ին <<ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 >> ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձանժողովը հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով <<Ֆրիներջի>> ՍՊ Ընկերությունը ճանաչվել էր ընտրված մասնակից:

07.08.2020թվականի /հրապարակվել է 10.08.2020թ./ .<<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին /Այսուհետ՝ ԳԲՔԱ/ ներկայացվել է բողոք՝ Պարտավորեցնել ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել թիվ 2 արձանագրությամբ <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը և վերջինիս հայտը մերժելու մասին որոշում կայացնել:

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ԳԲՔԱ-ին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

07.09.2020թ./հրապարակվել է 09.09.2020թ./ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է <<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի ներկայացված բողոքը բավարարել մասնակի, այն է՝

07.09.2020թ./հրապարակվել է 09.09.2020թ./ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է <<ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ>> ՍՊԸ-ի ներկայացված բողոքը բավարարել մասնակի, այն է՝

1) Պարտավորեցնել ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնել <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,
2) Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, մերժել:

2.Հանձնաժողովը որոշեց

2.1 Հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/70 ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 07.09.2020 թվականի կայացրած որոշումը՝

1) Դադարեցնել ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով գնանշման ընթացակարգի <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի համաձայն կասեցնել գնահատման գործընթացը և նույն օրը սույն ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/05 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից <<Ֆրիներջի>> ՍՊԸ-ին ուղարկել ծանուցում՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել 2020 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 17:00-ին, Կոտայքի մարզի, Նոր Գեղի համայնքի, Ֆ.Թևոսյան 64 հասցեում:

Հանձնաժողովի Նախագահ	Ա.Հղոթյան
անդամներ	Ա. Մկրտչյան
	Լ.Բարսեղյան
Քարտուղար	Կ. Հայրապետյան